



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀՀ ԲՆԱԴԱՎՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ



[Signature] Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«20» 11 2017թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 103

Ձեռնարկողը՝

<<Սպայկա>> ՍՊԸ

Ք. Երևան, Արշակունյաց 252

Գործունեությունը՝

Շենգավիթ Արտաշարի խճուղի 37/2, 49/3, 49/4, 49/5, 51/2, 51/3 հասցեներում նախատեսվող կաթնամթերքի գործարանի և ջերմոցային համալիրների նախնական գնահատման հայտ

ք. Երևան

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի տնօրեն՝



[Signature]

Վ. Սահակյան

Առդիր եզրակացությունը՝ 3 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԸՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԸՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 103

«20» 11 2017թ.

«Սպայկա» ՍՊԸ կողմից ներկայացված Շենգավիթ Արտաշատի խճուղի 37/2, 49/3, 49/4, 49/5, 51/2, 51/3 հասցեներում նախատեսվող կաթնամթերքի գործարանի և ջերմոցային համալիրների նախնական գնահատման հայտ

Պատվիրատու՝	«Սպայկա» ՍՊԸ
Նախագծող՝	«Քենփ Վենչուրա» ՍՊԸ, Թիմ Ֆլին Արքիթեքթս
Ներկայացված նյութեր՝	Աշխատանքային նախագիծ, Նախնական գնահատման հայտ;
Տեղադրման վայրը՝	Ք. Երևան
Գործունեության կատեգորիան	/Գ/ կատեգորիա

Համաձայն ներկայացված աշխատանքային նախագծի «Սպայկա ՍՊ» ընկերությունը նախատեսում է Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի Արտաշատի խճուղի 37/2, 49/3 հասցեներում սեփականության իրավունքով ընկերությանը պատկանող 6,39845 հա հողատարածքի վրա կառուցել կաթի վերամշակման գործարան, իսկ 49/4, 49/5, 51/2, 51/3 հասցեներում սեփականության իրավունքով 78,4393 հա հողատարածքի վրա կառուցել ջերմոցային տնտեսություն: Ջերմոցային տնտեսությունում աճեցվելու է լոլիկ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ: Ընկերությունը մտադիր է ներգրավել անհրաժեշտ ներդրումներ և կառուցել ջերմոցային համալիր՝ ծածկված կիսափակ պոլիէթիլենային թաղանթով և ոռոգել կաթիլային եղանակներով ակնկալելով ավելի քան 30 հազ. տոննա տարի լոլիկի բերք: Նախագիծը ներառում է 50հա ջերմոցային համալիրի կառուցում:

Ջերմոցային համալիրները 20 և 30 հա բաղկացած են 10 հատ /5 հա յուրաքանչյուրը/ ջերմոցային բլոկներից: Ջերմոցային համալիրը իրականացվելու է թեթև մետաղական /ցինկապատ/ կոնստրուկցիաներով և ծածկվում էրկշերտ ցելոֆանե ծածկանյութով, նմանատիպ կոնստրուկտորական լուծմամբ է նախատեսվում իրականացնել նաև ջերմոցային բլոկներին կից տեխնիկական և արտադրական օժանդակ շինությունները, որոնց մեջ տեղակայված են ողջ համալիրը նախատեսվող



կաթսայատունը; ոռոգման համակարգերը, փաթեթավորման համակարգերը և կենցաղ սպասարկման համար անհրաժեշտ տարածքները:

Ջերմոցային տնտեսության կառուցման համար անհրաժեշտ մետաղական ցինկապատ կոնստրուկցիաները, ներքին կոմունիկացիոն կապերը, ծակույթը եվ տեխնիկական արտադրական տարածքների պատերի սենդվիչ պանելները ներկրվում են ֆրանսիական Ռիշել ընկերությունից, որը հանդիսանում է Եվրոպայում առաջատար ընկերություններից մեկը նմանատիպ ջերմոցային տնտեսությունների արտադրության ոլորտում:

Ջերմոցային համալիրի կառուցման շրջանակներում կատարվող շինարարական աշխատանքների ընթացքում իրականացվելու են՝ 670.000 խմ ծավալով հողային աշխատանքներ լիցք և հանույթ նույն վայրից:

Կաթնամթերքի գործարանը՝ 5000քմ ընդհանուր մակերեսով գտնվում է Շենգավիթ համայնքում, Արտաշատի խճուղի 49/3 և 37/2 հասցեներում:

Նախագիծը մշակվել է երկու վերգետնյա 4600քմ յուրաքանչյուր հարկի մակերեսով հարկերով:

Շինության արտաքին երեսպատումը նախատեսվում է սենդվիչ պանելային երեսպատմամբ, տանիքը երկթեք է, ջրահեռցումը կազմակերպված:

Կրող կոնստրուկցիաները նախատեսված է իրականացնել մետաղական կոնստրուկտիվ լուծումներով որոնք մշակված են լինելու հատուկ հակաթթվակայուն նյութերով:

Հիմնական արտադրական տանիքին կից տեղադրված է տեխնիկական օժանդակ շինությունը 480քմ ընդհանուր մակերեսով, որում տեղակայված է կաթսայատունը, տաք և սառցաջրի պահեստները, էլ. ենթակայանը և պահեստային տարածքներ:

Կաթնամթերքի գործարանը՝ 60տ կաթի օրեկան մթերմամբ նախատեսված է ամսեկան 220 տ <<ոռքֆոր>> տեսակի պանրի արտադրության համար:

Ջերմոցային տնտեսության և կաթնամթերքի արտադրամասի ջրամատակարարումը և ջրահեռցումը իրականացվելու է համաձայն <<Վեոլիա Ջուր>> ՍՊ ընկերության կողմից տրամադրված տեխնիկական պայմանի:

Ըստ տեխնիկական պայմանի ջրամատակարարումը իրականացվելու է գործող Արցախ-Թեյշեբյան խաչմերուկում գտնվող ջրագծից, $d=800$ մմ, $P=3.0$ մթն. պողպատե խողովակով: Ջրահեռցումը իրականացվելու է Արտաշատի խճուղու հարևանությամբ գործող կոյուղագիծ, $d=1200$ մմ խողովակով:

Աշխատանքային նախագիծը մշակված է համաձայն N01/1807/1-U4374-536 ճարտարապետահատակագծային առաջադրանքի, պատվիրատուի կողմից ներկայացված տեխնիկական առաջադրանքի, ներկայացված պահանջների և << -ում գործող նախագծային և շինարարական նորմերի:

Նախատեսվող շինարարական աշխատանքների փուլում մթնոլորտի վրա ազդեցությունը կապված է հողային աշխատանքների և շինարարական տեխնիկայի աշխատանքի ընթացքում առաջացող արտանետումներով: Շինարարական աշխատանքները կրում են ժամանակավոր բնույթ և չունեն զգալի ազդեցություն:

Նախատեսվող շինարարական աշխատանքների փուլում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցությունների բացառման, նվազեցման նպատակով նախատեսված են մի շարք միջոցառումներ:

Օդային ավազանի վրա ազդեցությունը կապված է հողային աշխատանքների և շինարարական տեխնիկայի աշխատանքի ընթացքում առաջացող արտանետումներով:



Օդային ավազանի աղտոտումը նվազեցնելու նպատակով նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- շինարարական հրապարակները ցանկապատել համապատասխան բարձրության անթափանց թաղանթով,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
- պարտադիր կարգով շինանյութերը, ավելցուկ գրունտը և շինարարական աղբը տեղափոխել անթափանց ծածկոցներ ունեցող մեքենաներով,
- շինհրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել,
- սորուն նյութերը (ավազ, ցեմենտ) պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով,
- շինարարական տեխնիկայի տեղաշարժը և աշխատանքը իրականացվելու է միայն գոյություն ունեցող ճանապարհներով, բացառելով կանաչ գոտիների վնասումը, նոր տարածքների խախտումը և աղտոտումը:
- բացառվելու է շինարարական աղբի և հողերի կուտակումները բուսածածկ տարածքներում:

- պարբերաբար իրականացվելու է տեխնիկայի շարժիչների կարգաբերում,
- չոր եղանակների ժամանակ իրականացվելու է խճի, պահեստավորված և տեղափոխվող հողային զանգվածների խոնավացում:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ աշխատանքները իրականացվելու են ջրային ռեսուրսներից բավականին հեռավորության վրա, կարելի է եզրակացնել, որ թե շինարարության, և թե շահագործման ընթացքում որևէ ազդեցություն ջրային ռեսուրսների վրա չի լինի:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվում է շինարարական հարթակների ջրցանի, ինչպես նաև ինժեներատեխնիկական անձնակազմի, բանվորների և վարորդների կոմունալ կենցաղային կարիքների ապահովման համար:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը բարեկարգել և իրականացնել կանաչապատման աշխատանքներ:

Համալիրի համար ջերմության աղբյուր է հանդիսանում կաթսայատունը, որտեղ նախատեսված է 2 հատ մոդելի գազով աշխատող կաթսաներ, յուրաքանչյուր 700կկտ արտադրողականությամբ:

Կաթսայատանը որպես վառելիք օգտագործվելու է բնական գազը միջինը 8250 կկալ/խմ ջերմատվողությամբ:

Բնական գազն անցնելով ճնշման կարգավորիչով տրվում է բոցամուղեր: Ջրաջեռուցիչ կաթսաները համալրված են ժամանակակից բոցամուղերով և այրման ռեժիմի ավտոմատ կարգավորիչներով: Բոցամուղերում տեղադրված են օդամուղներ, որոնք ավտոմատ կերպով ապահովում են օդի խիստ չափավորված խառնուրդ, շնորհիվ որի հնոցում պահպանվում է այնպիսի ջերմաստիճանային ռեժիմ, որի ժամանակ էականորեն նվազում են արտանետումները: Ելնելով արտաքին միջավայրի ջերմաստիճանից հատուկ ավտոմատ տվիչները կարգավորում են բոցամուղների աշխատանքը անջատման և միացման միջոցով, ինչն ապահովում է վառելիքի խնայողական օգտագործում:

Ջրաջեռուցիչ կաթսաները համալրված են նաև անվտանգությունն ապահովող անհրաժեշտ սարքերով, վթարային անջատիչներով, ճայնային և լուսային ազդանշաններով:



Բնական գազի վթարային անջատումների ժամանակ ավտոմատ համակարգը անջատում է այրիչները և արգելափակում է գազի մղման գծերը: Կաթսայատան ազդեցությունը շրջակա միջավայրի վրա պայմանավորված է բնական գազի այրման արդյունքում առաջացած վնասակար նյութերի արտանետմամբ:

Եզրահանգում՝ Նախատեսվող գործունեության հիմնական ազդեցությունը պայմանավորված է շինարարության փուլով, ինչը չունի զգալի ազդեցություն և կրում է ժամանակավոր բնույթ: 2017թ նոյեմբերի 2-ին և 15-ին նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի վերաբերյալ կազմակերպվել են հասարակական լուսմներ, որոնց արդյունքում կազմված արձանագրություններով մասնակիցները և ազդակիր համայնքը նախատեսվող գործունեության իրականացմանը տվել են իրենց հավանությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Սպայկա>> ՍՊԸ կողմից ներկայացված Շենգավիթ Արտաշատի խճուղի 37/2, 49/3, 49/4,49/5, 51/2, 51/3 հասցեներում նախատեսվող կաթնամթերքի գործարանի և ջերմոցային համալիրների նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն:

Մասնագետ



Ա. Մինասյան